նայն Տէր Աւագեան, երեցփոխան եկեղեցւոյն և յարգելիքն՝ Սամուէլն Յարութիւնեանց և Ղևոնդն Մկրտչեան Յակոբեանց. իսկ յանձնափոխանորդ վերջնոցս՝ պատուելի Կարապետն Սարգսեան Կարապետեանց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 29 օգոստ. ընդ համարաւ 347 յանուն Գեր. Առաջնորդի Թեմին Հայոց Վրաստանի և Իմերէթի, որով թոյլատրեցաւ բանալ ի Մանգլիս տանի զմիդասեան միացեալ եկեղ. ծխակ. ուսումնարան։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 29 օգոստ. ընդ համարաւ 348 յանուն Գեր. Առաջնորդի Թեմակալին Հայոց Երևանայ, որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղ. ծխակ. երկսեռից ուսումնարանաց Ս. Յովհաննէս եկեղեցւոյ Հայոց Գանձակ քաղաքի բարեկրօն Գրիգոր քահանայն Թումանեանց, յարգելի երեցփոխան եկեղեցւոյն և պատուելիքն՝ Ներսէն Տէր Ներսէսեանց և Կարապետն Փաթալեան. իսկ յանձնափոխանորդս վերջնոցս՝ յարգելիք՝ Յակոբն Տէր Յարութիւնեանց և Միքայէլն Համասիրեանց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 29 օգոստոսի ընդ համարաւ 344 յանուն Գեր. Առաջնորդի Թեմին Հայոց Արցախոյ, որով հաստատեցաւ ի պաշտօն Թեմ. Տեսչութեան եկեղ. ծխակ. ուսումնարանաց Հայոց վիճակին բարեկրօն Պետրոս քահանայն Տէր Յովհաննիսեանց Խան - քեանդ գեղջ։

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

22 Օգոստոսի. ըստ կոնդակի Նորին Վեհափառութեան, ընդ համարաւ 322, Երևանի վիճակի փոխանորդ Գերապատիւ Սուքիաս Եպիսկոպոսը վերակոչուեց յԷջմիածին ի վարուժն անդամական պաշտաման Սինոդոսում։

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։